

**ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝  
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔ \***

**ԱՐՊԱՏ ԱԿԱՆԵՍՅԱՆ**

**ԼՂՀ ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահ**

**Մ.գ.դ., ԱրՊՀ պրոֆեսոր**

*Հոդվածում ներկայացված է Արցախի համալսարանական համակարգի ստեղծման գործընթացը՝ որպես արցախահայության ազգային-ազատագրական պայքարի արդյունք: Համաժամանակ, համապատասխան հիմնավորումներով տրված են նաև ադրբեջանական տիրապետության օրոք Լեռնային Ղարաբաղի ինքնավար Սարգում բուհական կրթության ստեղծման շարժառիթները նշված դրանց ոչ հայանպաստ հեռագնա նպատակները:*

*Հանրահայտ է, որ Ղարաբաղյան շարժման կարևոր խթաններից մեկն ինքնավար մարզի հայկական կրթօջախներում լիարժեք հայեցի կրթության ապահովման անհրաժեշտությունն էր: Գաղտնիք չէ, որ հայկական դպրոցները, մանավանդ, քաղաքներում և առանձնապես Ստեփանակերտում, հետզհետե ռուսականացվում և ադրբեջանականացվում էին, ինչի հետևանքով տարեցտարի ահագնանում էր ռուսերեն ուսուցում ստացող աշակերտության տեսակարար կշիռը: Եվ հայ աշակերտության մի զգալի հատված ակամա անհաղորդ էր մնում մայր ժողովրդի պատմության, հայոց լեզվի ու գրականության, ազգային մշակույթի և արվեստի արժեքներին: Միևնույն ժամանակ հայկական դպրոցներում սովորող աշակերտությունը զրկված էր հայոց պատմության ու մշակույթի իրողությունները յուրացնելու հնարավորությունից: Բնականաբար, խոսք լինել չէր կարող հայրենի երկրամասի՝ Արցախի բազմադարյա պատմությունը և մշակույթը ինքնավար մարզի հայազգի աշակերտությանն ուսուցանելու մասին:*

*Փաստորեն իրականացվում էր մարզի հայ բնակչության լրիվ կամ մասնակի գոմբիացման կամ այլ կերպ ասած՝ ուժացման քաղաքականություն, որը հավասարազոր է «սպիտակ ջարդի», «սպիտակ ցեղասպանության»: Այդ գործընթացը, առհասարակ, բխում էր տխրահռչակ «լեռնիյան իմաստուն ազգային քաղաքականության» հայեցակարգից: Ինչ խոսք, դա լիովին համապատասխանում էր ազգային փոքրամասնությունների նկատմամբ Ադրբեջանական ԽՍՀ իշխանությունների քաղաքական շահերին: Այս համատեքստում հիշենք Ադրբեջանում լեզգիների, ավարցիների, թալիշների, ցախուրների, ռուտուլների և ազգային փոքրամասնությունների վերածված բնիկ այլ ազգությունների հետ կատարվածը, որոնք բոլորն էլ ճնշող մեծամասնությամբ ուժացվել են, զրկվել ազգային լեզվով կրթություն ստանալու, ազգային մշակութային, պատմաճարտարապետական արժեքները պահպանելու, որպես ինքնատիպ ազգություն գոյատևելու ու զարգանալու իրավունքից, այսինքն՝ արմատախիլ են արվել և առ այսօր ներկայացվում են որպես ադրբեջանական ազգության քաղաքացիներ՝ հիմք ընդու-*

\* Հոդվածն ընդունվել է 18.02.2013:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:

նելով բուն ադրբեջանցիների հետ միայն մեկ ընդհանրական գործոն՝ նրանց մահմեդական դավանանքը:

Ադրբեջանի պետականակիր երկու ազգերից մեկի՝ հայ ազգաբնակչության նկատմամբ Բաքվի իշխանությունների քաղաքականությունը երկսայր էր. մի կողմից՝ առաջ էր մղվում հայ քաղաքացիների հետևողական զոմբիացման գործընթացը, մյուս կողմից՝ ամենատարբեր ձևերով (նպատակային արհեստագործական ուսուցման և զանգվածային շինարարական աշխատանքների կատարման պատրվակներով այլ քաղաքներ տեղափոխում, աշխատատեղերի արհեստական բացակայության կազմակերպում, ահաբեկում, քաղաքական հալածանք, աքսոր, ձերբակալություն և այլն) իրականացվում էր ազգային բնօրրանից և կամ պարզապես բնակության վայրից հայերի հեռացման, վտարման, տեղահանման քաղաքականությունը, ինչպես դա տեղի էր ունենում նախիջևանահանության պարագայում:

ԼՂԻՄ-ը նույնպես հայաթափվում էր, իհարկե ոչ այն թափով ու ծավալներով, ինչպես Նախիջևանում, քանզի առկա էր որոշակի բացահայտ և կամ սքողված դիմադրություն, բայց, այնուամենայնիվ, այստեղ ևս իրավիճակը տխուր էր:

Խնդիր ունենալով քննարկել Արցախում համալսարանական կրթահամակարգի ստեղծման գործընթացը՝ մանրամասն կանգ չառնենք երևույթի բոլոր էական դրդապատճառների վրա: Պարզապես նշենք դրանցից մեկը. ի տարբերություն ԽՍՀՄ այլ ինքնավար պետական կազմավորումների՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը տասնամյակներ շարունակ չուներ բարձր որակավորման կադրերի պատրաստման որևէ կրթական հաստատություն: Այո, մի որոշակի ժամանակահատված՝ 1938-1953 թվականներին, այն էլ՝ տևական ընդհատումներով գործում էր Շուշիի, ապա Ստեփանակերտ տեղափոխված երկամյա մանկավարժական ինստիտուտը, որը, որպես թերի բարձրագույն կրթական հաստատություն, միայն ուսուցչական կադրեր էր պատրաստում: Մինչդեռ Լեռնային Ղարաբաղը միայն ուսուցչական կադրերի կարիք չէ, որ ուներ: Բարձր որակավորման կադրերի մեծ խնդիր կար մարզի կենսագործունեության բոլոր ոլորտներում ու բնագավառներում առանց բացառության: Եվ արցախցի երիտասարդությունը սովորելու էր մեկնում ինչպես Բաքու ու Երևան, նույնպես և Խորհրդային Միության այլ քաղաքներ, որտեղից մեծամասամբ չէր վերադառնում [1]:

Սկսած 1960-ական թվականներից՝ հարածուն սաստկացան Լեռնային Ղարաբաղի հայ մտավորականության բողոք-պահանջները՝ կապված ինքնավար մարզում բուհական համակարգի ստեղծման անհրաժեշտության հետ: Բողոքի այդ ալիքը միութենական և հանրապետական ղեկավարությանը ստիպեց վերանայելու ու որոշ շտկումներ կատարելու ինքնավար մարզի կրթական համակարգում իրականացվող քաղաքականության մեջ:

1969 թվականին ստեղծվեց Ադրբեջանի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը, ինչով, փաստորեն, արձանագրվեց բարձրագույն կրթության մուտքը Լեռնային Ղարաբաղ: Նորաստեղծ բուհական մասնաճյուղի կառուցվածքում հայկականի և ռուսականի հետ մեկտեղ ներառվեց նաև ադրբեջանական բաժանմունք: Միևնույն ժամանակ փակվեց Բաքվի մանկավարժականի հայկական բաժանմունքը [2]:

իրադարձությունների հետագա ընթացքը ցույց տվեց, որ այդ ճանապարհով Ադրբեջանական իշխանությունները լուծեցին իրենց համար կարելիոր մի շարք ռազմավարական հարցեր.

- դադարեցվեց հանրապետության մայրաքաղաքի՝ Բաքվի թեկուզ եւ մասամբ, բայց այնուամենայնիվ, հայեցի բարձրագույն կրթօջախի գոյությունը.

- վերացվեց Բաքվում հայ մտավորականության վերարտադրության եւ հետագա առկայության հնարավորությունը.

- արագացվեց Ադրբեջանի մայրաքաղաքի հայաթափման վաղուց արդեն հետեւողականորեն իրականացվող գործընթացը.

- սկսվեց ձեւավորվել զուտ ադրբեջանական մտավորականություն հայկական Արցախում.

- կտրուկ ավելացավ ինքնավար մարզի ադրբեջանական բնակչության թվաքանակը հարակից շրջաններից եկող վերաբնակիչների հաշվին.

- սկսեց հետզհետե մեծանալ Բաքվի իշխանությունների կողմից «տեղական կադրեր» հորջորջված ադրբեջանցի պաշտոնյաների տեսակարար կշիռն ինքնավարության պետական եւ հանրային կառույցներում:

Այդ հեռագնա նպատակները, սքողված լինելով գաղտնիության շղարշով, մատուցվում էին իբրեւ Ադրբեջանում «ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկանություն» եւս մեկ էական արտահայտություն, որպես հերթական խոշոր քայլ՝ ուղղված հանրապետության ազգային փոքրամասնությունների, ինչպես նաեւ պետականակիր հայ ազգաբնակչության գիտակրթական պահանջների համակողմանի բավարարմանը:

Յամոզվելով, որ այդ մարտավարական ձեռնարկումը որքան արդյունավետ ու հեռանկարային է իրենց որդեգրած նպատակների իրագործման ճանապարհին՝ Բաքվի իշխանությունները ձեռնամուխ եղան Ադրբեջանի հայ ազգաբնակչության նկատմամբ յուրօրինակ «անշահախնդիր եղբայրական հոգատարության» քարոզարշավի հերթական փուլին՝ այս անգամ այն կապելով օրվա քաղաքական իրադարձության՝ Ադրբեջանի կազմում ԼՂԻՄ-ի կազմավորման 50-ամյա հորեյլանի հետ: 1973թ. դեկտեմբերին Ադրբեջանի Մինիստրների խորհրդի որոշմամբ՝ Ադրբեջանի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը վերակազմավորվեց ինքնուրույն բուհի՝ կոչվելով Ստեփանակերտի Սովետական Ադրբեջանի 60-ամյակի անվան պետական մանկավարժական [3]:

Նման վերակազմավորման դրդապատճառը, մեր համոզմամբ, Ադրբեջանի գերիշխանության եւ հայահալած քաղաքականության դեմ ինքնավար մարզի բնիկ հայ բնակչության տասնամյակներ ի վեր չլռած և 60-ական թվականներին նոր թափ առած ժողովրդական ընդվզման շարունակականությունն էր, որն իրեն զգացնել է տալիս նաեւ 70-ական թվականներին՝ երկրամասի հայ բնակչության հազարավոր բողոք-նամակների տեսքով: Բաքվի իշխանություններին, ինչպես ասում են, օր ու օրի պես պետք էր գոնե ինչ որ կերպ մեղմել արցախցիների բողոքի վերստին բարձրացող ալիքը:

Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի բացումը 1969 թվականին կարելի է դիտել որպես Լեռնային Ղա-

րաբաղի բնակչության շրջանում առաջացած հուզումների մեղմացմանն ուղղված առաջին՝ զուտ քաղաքական հանգամանքների պարտադրանքով կատարված քայլ, կամ ավելի ճիշտ՝ կիսաքայլ: Բաքվում լավ էին զիտակցում, որ այն չի կարող լիովին գոհացում տալ մարզի բնակչությանը եւ առաջին հերթին՝ մտավորականությանը: Ուստի ստիպված էին կատարել հաջորդ կիսաքայլը՝ գործող մասնաճյուղը վերակազմավորելով ինքնուրույն ինստիտուտի՝ այդ իրադարձությունը, իհարկե, ոչ առանց քաղաքական ենթատեքստի, հարմարեցնելով Ադրբեջանի կազմում ԼՂԻՄ-ի ստեղծման 50-ամյա հոբելյանին: Ինստիտուտը, կոչելով Սովետական Ադրբեջանի 60-ամյակի անվամբ, թեկուզ նույն այդ 60-ամյակը դեռ յոթ սարի ետևում էր, Բաքուն մեկ անգամ եւս շեշտեց ու հիշեցրեց, որ ինքնավար մարզը գտնվում է Ադրբեջանի կազմում եւ իրավաենթակա է բացառապես Ադրբեջանին՝ որպես անշրջելի ու անբեկանելի իրողություն:

Հիմնադիրների մտահոգացմամբ ԼՂԻՄ առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը կոչված էր դառնալու հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն դասավանդող ուսուցիչների պատրաստման տարածաշրջանային կենտրոն, որը պետք է մանկավարժական կադրեր թողարկեր ԼՂԻՄ և նրա հարակից ադրբեջանական շրջանների դպրոցների համար: Թե ինչ ռազմավարական նպատակներից ելնելով՝ կարելի է դատել Հեյդար Ալիևի մի հարցազրույցից, որ հրապարակվել է Բաքվի «Ձերկալո» թերթի 2002թ. հուլիսի 23-ի համարում: Մեջբերում եմ. «Երբ ես առաջին քարտուղար էի՝ ջանում էի, այնտեղ փոխել ժողովրդագրությունը: Լեռնային Ղարաբաղն ինստիտուտ՝ բուհ բացելու հարց էր բարձարել: Մեզ մոտ բոլորն էլ առարկում էին: Ստաժեցի, որոշեցի բացել, բայց պայմանով, որ երեք բաժանմունք լինի՝ ադրբեջանական, ռուսական, հայկական: Բացեցինք: Հարակից շրջանների ադրբեջանցիներին մենք ուղարկեցինք ոչ թե Բաքու, այլ այնտեղ: ...Այդ եւ այլ միջոցներով ես ձգտում էի, որպեսզի Լեռնային Ղարաբաղում ավելի շատ ադրբեջանցիներ լինեն, իսկ հայերի թիվը կրճատվի» [4]:

Առաջին հայացքից կարծես թե ուրախալի փաստ էր ԼՂԻՄ-ում ինքնուրույն պետական մանկավարժական ինստիտուտի հիմնադրումը: Սակայն, դրա հետ մեկտեղ, չմոռանալով նաև այն բացասական դերը, որ խաղաց մանկավարժական ինստիտուտը՝ ապահովելով ադրբեջանցի, այսպես կոչված, «մտավորականների» շոնդալի ներհոսն ինքնավար մարզ ու նրանց քայքայիչ գործունեությունն Արցախյան շարժման ժամանակ ու նրա նախորդ տարիներին, ինչը, կարծում ենք, ոչ ոք չի կարող ժխտել:

Բնականաբար, նման իրավիճակը երկար չէր կարող տևել: Օրըստօրե ծավալվում էր Ղարաբաղյան շարժումը, որի առաջնագծում էին Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայազգի պրոֆեսորադախտասական կազմը եւ ուսանողությունը:

Ի պատասխան այդ ակտիվ մասնակցության՝ ՍՍՀՄ Մինիստրների սովետը, ԼՂԻՄ եւ ԱդրխՍՀ իշխանությունների մատուցմամբ, 1988թ. հոկտեմբերի 18-ին որոշում կայացրեց Ստեփանակերտի Սովետական Ադրբեջանի 60-ամյակի անվան մանկավարժական ինստիտուտը ժամանակավորապես փակելու մասին: Իրականում Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը փակվեց վերջնականապես՝ ընդմիջտ դադարեցնելով իր գործունեությունը և որպես իրավա-

բանական անձի իր գոյությունը:

Ստեփանակերտի լուծարված մանկավարժական ինստիտուտի հայազգի ուսանողների ուսուցումը շատ չանցած կազմակերպվեց Կիրովականի՝ (ներկայիս Վանաձորի) Դովհաննես Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հյուրընկալ հարկի ներքո: Ավադ, դա տևեց անչափ կարճ մի ժամանակահատված՝ Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքով: Արցախցի ուսանողներն ու դասախոսները ստիպված էին վերադառնալու:

Ստեղծված իրավիճակից, որի պայմաններում Արցախում թե իրավական և թե գործնական առումներով գոյություն չունեցող որևէ բուհական հաստատություն, էական ելք հանդիսացավ Կիրովականի մանկավարժականի խորհրդատվական կետի բացումը Ստեփանակերտում՝ հակառակ Ադրբեջանի հարուցած արգելքների ու խոչընդոտների: Այս Զայաստան-Արցախ համատեղ ջանքերով և Զայական ԽՍՀ ժողովրդական կրթության մինիստրության կոլեգիայի 1989թ. մարտի 13-ի թիվ 5 որոշմամբ խորհրդատվական կետը վերակազմավորվեց նույն ինստիտուտի բաժանմունքի [5]:

Այս նշանակալի իրադարձությամբ, փաստորեն, ազդարարվեց ԶԶ բարձրագույն կրթության համակարգի մուտքն Արցախ, ինչն ինքնին դարձավ արցախահայության առաջին մեծ ձեռքբերումներից մեկը՝ Ղարաբաղյան շարժման որդեգրած գաղափարների ու նպատակների իրականացման ճանապարհին:

Զայաստանի բուհական կրթահամակարգի մուտքն Արցախ հետագայում վերածվեց իրական հաղթարշավի որի ակունքներում Կիրովականի ինստիտուտի օրինակով կանգնեցին Մայր հայրենիքի նաև մյուս բուհերը, այդ թվում Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը՝ ներկայումս Զայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը: Ինչպես գիտեք, արդեն 1990-1991 ուստարում՝ ԶԶ և ԼԴԶ իշխանությունների փոխհամաձայնությամբ Ստեփանակերտում սկսեց գործել Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի հեռակա ֆակուլտետի ընդհանուր տեխնիկական բաժանմունքը, որը հաջորդ ուստարվանից վերակազմավորվեց Զայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի մասնաճյուղի [6]:

Այս իրողությունն ազդարարեց Ղարաբաղյան շարժման, արցախահայության ազգային-ազատագրական պայքարի ևս մեկ հույժ կարևոր ձեռքբերում՝ Արցախում սկզբնավորվեց ճարտարագիտական կրթությունը:

Մինևույն ժամանակ Զայաստանի տարբեր բուհերի նախաձեռնությամբ Եր-ՊԻ-ի հեռակա ֆակուլտետի ընդհանուր տեխնիկական բաժանմունքում սկսեցին իրենց ուսումը շարունակել այդ կրթական հաստատությունների արցախցի հարյուրավոր ուսանողներ՝ հնարավորություն ստանալով ուսմանը զուգահեռ մասնակցել Ադրբեջանի կողմից խիստ շրջափակման մեջ հայտնված և պատերազմական գործողությունների թատերաբեմ դարձած հայրենի Արցախի պաշտպանությանն ու ազատագրմանը:

Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտի բաժանմունքը և Զայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի մասնաճյուղը, ի լրումն բուհական ստորաբաժանումների իրենց հիմնական նպատակային գործառույթների, իրականում ունեցան ևս մեկ կարևոր դերակատարություն՝ դար-

ծան այն ընդհանրացած հունդը, որից ծլարծակեց ու ծնունդ առավ Արցախի համալսարանական կրթության առաջնեկը՝ Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանը՝ ներկայիս Արցախի պետական համալսարանը:

Լեռնային Ղարաբաղում պետական համալսարան ստեղծելու գաղափարը, անկասկած, եղել է յուրաքանչյուր հայրենասեր արցախցու երազանքը: Ադրբեջանական գերիշխանության շրջանում այդ մասին երազելն անգամ անհիմաստ էր, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է հայկական պետական համալսարանին:

Անցած դարի 90-ական թվականների սկզբներին, երբ Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը կենաց ու մահու խնդիր էր դրել արցախահայության առջև, կայացվեց պատմական վճիռը՝ իրականություն դարձնել մեր ժողովրդի նաև այս վաղեմի երազանքը: Առհասարակ, ինչպես վկայում է պատմությունը, Հայաստան աշխարհում խոշոր գիտակրթական հաստատությունները ստեղծվել են հենց հանգուցային պահերին, խառնակ ժամանակներում, երբ, ըստ երևույթին, կրթական ու գիտական մտքի զորաշարժ էր պահանջվում: Հիշենք թեկուզ համենատարբար մոտ անցյալի՝ 20-րդ դարի երկու նման առանցքային իրադարձություններ՝ Երեւանի պետական համալսարանի հիմնադրումը Հայաստանի առաջին հանրապետության օրոք և Հայաստանի գիտությունների ակադեմիայի ստեղծումը Հայրենական պատերազմի տարիներին:

Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի ստեղծման համար բազային նախադրյալ են ծառայել Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքը և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղը, որոնց միավորմամբ էլ ԼՂՀ և ՀՀ իշխանությունների փոխհամաձայնության պայմաններում ընդունվեց Հայաստանի Հանրապետության կառավարության 1992թ. հոկտեմբերի 13-ի թիվ 509 պատմական որոշումը: Համալսարանի հանդիսավոր բացման արարողությունը տեղի ունեցավ 1993թ. մայիսի 10-ին՝ ի նշանավորումն Շուշիի ազատագրման առաջին տարեդարձի [7]:

Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանը ներգրավվեց Հայաստանի բարձրագույն կրթության եւ գիտության նախարարության համակարգում: Նրա բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով, ի լրումն Արցախում առկա պրոֆեսորադասախոսական կազմի, դասախոսական աշխատանքի հրավիրվեցին նաեւ այլ բնագավառներում ու ոլորտներում աշխատող փորձառու մասնագետներ եւս: Բացի այդ, ներգրավվեցին Հայաստանից գործուղված շուրջ երեք տասնյակ դասախոսներ՝ գիտության տարբեր ոլորտների ինչպես փորձառու, նույնպես և երիտասարդ մասնագետներ: Միաժամանակ եռանդուն ջանքեր էին գործադրվում համալսարանի նյութատեխնիկական բազայի կայացման ուղղությամբ:

ԼՂՊՀ-ի ներկայիս ԱրՊՀ-ի ստեղծումը բնավ ինքնանպատակ չէր: Իր գործունեության շուրջ 20 տարում մեր համալսարանն իրավամբ դարձել է բազմապրոֆիլ կրթական հաստատություն, բարձր որակավորման կադրերի պատրաստման դարբնոց, որի շրջանավարտները ներկայումս հաջողությամբ աշխատում են հանրապետության կենսագործունեության, առանց բացառության, բոլոր բնա-

գավառներում ու ոլորտներում: Ավելին՝ համալսարանն աստիճանաբար վերածվել է տարածաշրջանային կրթական հաստատության, որտեղ ուսանում են ոչ միայն բնիկ արցախցի պատանիներն ու աղջիկները:

Միևնույն ժամանակ, որպես մեր հանրապետությունում համալսարանական կրթության առաջնեկ՝ Արցախի պետական համալսարանը վերջին ավելի քան տասը տարում ստացել է մայր բուհի կարգավիճակ: Ինչպես գիտեք, հանրապետությունում, սկսած 90-ական թվականների վերջերից, զործում են նաև մի շարք մասնավոր համալսարաններ, որոնց ծնունդը հիմնականում պայմանավորված է ԱրՊՀ առկայությամբ: Մասամբ ԱրՊՀ-ի ծնունդ է նաև Հայաստանի պետական ազրարային ակադեմիայի Ստեփանակերտի մասնաճյուղի գոյությունը [8]:

Այսպիսով.

1. Ադրբեջանի հակահայ քաղաքականության հետևանքով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը միակն էր ԽՍՀՄ այն ինքնավար պետական կազմավորումներից, որտեղ բացակայում էր բարձրագույն կրթական համակարգը:

2. Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի բացումը 1969 թվականին, փաստորեն, արձանագրեց բարձրագույն կրթության մուտքը Լեռնային Ղարաբաղ: Այն իրականացվեց զուտ քաղաքական հանգամանքների պարտադրանքով ու հեռագնա ոչ հայանպաստ քաղաքական ենթատեքստով:

3. Արցախում համալսարանական կրթությունը բացառապես արցախահայության ազգային-ազատագրական պայքարի արդյունքն է և նրա կարևորագույն ձեռքբերումներից մեկը: Այն բոլորովին հնարավոր չէր Ադրբեջանի գերիշխանության պայմաններում, քանզի արմատականորեն հակասում էր այդ հանրապետության իշխանությունների հակահայ քաղաքականությանը: Բնականաբար, թե՛ իրավական և թե՛ փաստական առումներով միանգամայն անհիմն, հակաարդյունավետ և անընդունելի են Արցախի պետական համալսարանի հիմնադրման տարեթիվը ավելի հեռավոր ժամանակաշրջան՝ 1969 թվական տեղափոխելու փորձերը:

4. Արցախում կայացել է համալսարանական կրթահամակարգը՝ իր բոլոր ձեռքբերումներով, ինչու չէ, նաև բացթողումներով ու թերություններով, ընթացիկ ու հետագա հնարավոր բարեփոխումներով հանդերձ:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ավանեսյան Ա., «Արցախի բուհական համակարգը և գիտակրթական ներուժը», «Դիզակ պլուս» իրատարակչություն, Ստեփանակերտ, 2008, էջ 216:
2. Նուն տեղում:
3. Նուն տեղում:
4. Газ. “Зеркало”, Баку, 23.07.2002.
5. Սուլեյմանյան Ա., «Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի ստեղծման ակունքներում», Եր., 1988, էջ 96:

6. Սուլեյմանյան Ա., Գևորգյան Ա., Ավանեսյան Ա., «ԼՂԴՅ (ԱրԴՅ). հայկական երկրորդ պետական համալսարան, (1990-1994թթ.)», «Դիզակ պլուս» հրատ., Ստեփանակերտ, 2008, էջ 224:
7. Ավանեսյան Ա., «ԼՂԴՅ (ԱրԴՅ). հայկական երկրորդ պետական համալսարան, (1990-1994թթ.)»:
8. Ավանեսյան Ա., «Արցախի գիտակրթական համակարգ. կայացման ընթացք, զարգացման միտումներ», «Դիզակ պլուս» հրատ., Ստեփանակերտ, 2011, էջ304:

## **РЕЗЮМЕ**

### **Университетское образование в Арцахе- результат национально-освободительной борьбы Арпат Аванесян**

В статье представлен процесс создания университетской системы в Арцахе в качестве результата национально-освободительной борьбы. Одновременно с соответствующими обоснованиями утверждаются мотивы создания вузовской системы в Нагорно-Карабахской Автономной Области в период азербайджанского господства, отмечены их по сути антиармянские цели на перспективу.

## **SUMMARY**

### **University Education in Artsakh is the Result of the National Liberation Struggle Arpat Avanesyan**

The article presents the process of the Artsakh high school system formation as a result of the Artsakh National Liberation struggle. At the same time we, alongside the corresponding grounds, state the motives of the high school system formation in the Nagorno Karabakh Autonomous Oblast under Azerbaijan power and underline their anti-Armenian aims and perspectives.